ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ---------- 2023 թվականի N----Ա

«ՍՈԼԱՐԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի հունիսի 6-ի «Էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» N308Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի N2 հավելվածի N2-17 ձևով սահմանված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձի կողմից գնված, վաճառված, ներկրված էլեկտրաէներգիայի և ստացված ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 25-ն է,

բ) «ՍՈԼԱՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի ընթացքում խախտել է Որոշման պահանջը, սակայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիմքով Հանձնաժողովի կողմից վարչական վարույթ չի հարուցվել, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի ՈԳԲ/34.4-Ղ4-2/4629-2022 գրությամբ,

գ) Ընկերությունը 2023 թվականի հունվար ամսվա արդյունքներով Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի փետրվարի 28-ին,

դ) Հանձնաժողովը Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով 2023 թվականի մարտի 9-ից Ընկերության նկատմամբ

հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի մարտի 9-ի ՈԳԲ/34.4-Մ2-1/743-2023 գրությամբ,

ե) Ընկերությունը վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշմամբ սահմանված՝ Տեղեկատվության ներկայացման ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերն ու «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2023թ.